զայն Խորհուրդ։ Եւ եւս 'ի համարձակիլ ոմանց, գանկատէր զնոցանէ իբրեւ զանիրաւէ, որպէս փոխանորդն Երուսաղէմի Պօղոս վարդապետ ասէր՝ թէ չեն իրաւունք նըստելով պատարագելն. այլ նա ասէր մինթէ ո՞չ գիտեմ ըզկանոնս։ Սակայն ընդ տկարութեան մարմնոյն՝ տկարացեալ էր և Պատրիարքական իշխանութիւնն, և չէր ոք որ երկնչէր 'ի նմանէ. թէպէտեւ զայս ամենայն հաստուցանէին յունկն նորա, բայց նա անհոգացեալ ասէր. զի՞ փոյթ է այլոց զկառավարութենէ իմմէ, մինթէ չունի՞մ իշխանութիւն առնել զոր կամիմս։ Իսկ 'ի գործս զայսոսիկն միայն հարցանէր գլխաւորաց ազգին, և զգաղտնիսն ինքն միայն 'ի ծածուկ կատարէր, եւ 'ի հրապարակիլն չգիտեալ ձեւանայր. նմին իրի բազումք ցրտացեալ էին 'ի սիրոյ նորա, և գործք Պատրիարքութեան անյաջող յամենայն տեղիս, և տաղտկացեալ գլխաւորք ազգին։

Եւ 'ի ժամանակիս յայսմիկ Փոխանորդն Երուսաղէմի կամէր տալ զհաշիւն իւր ազգին՝ զի բազումք բամբասէին զնա թէ զարդիւնս Երուսաղէմի ետ յափշտակել Ամիրայից, մանաւանդ թէ ծախեաց զայն փոխան պարտուց Ազնաւորեան Քեահեայ Կարապետ Ամիրայի, և այնպէս բամբասէին զմեծ բարերարն Երուսաղէմի զայրն բարեպաշտ։

Սակայն գործ Երուսաղէմի չեւ էր աւարտեալ, որոյ վասն մնայր հաշիւն։ Իսկ 'ի սաստկանալ բամբասանաց, ստիպեաց զԱմիրայս Պօղոս՝ եւ առաջի եդ նոցա զՏումար հաշուոց եւ նոքա խոստացան տեսանել զայն բազմութեամբ ('ի 1 Սեպտեմբերի)։ Եւ 'ի նմին աւուր եկին ըստ խոստմանց իւրեանց, ընդ որս էին և գլխաւորք արհեստաւորաց. տեսեալ Պատրիարքին եւ Փոխանորդի նորին զժողովին այնքան խուռն բազմութեան՝ զարմանային, զի ոչ գիտէին ինչ։ Ոմանք 'ի գլխաւորաց առեալ զՊատրիարքն մուծին 'ի փոքր սենեակն և ստիպէին զնա գրել զհրաժարական իւր, և նորա ոչ մատուցեալ ունկն բանից նոցա, զպատճառն հարցանէր, և նոքա ստիպէին կամ հրաժարիլ և կամ տալ պատասխանի. զի գնացեալ 'ի Դուռն կատարեսցեն զոր կամէին. տեսեալ նորա թէ ոչ կարէ կալ ընդդէմ նոցա՝ յանձն առ կատարել զկամս ազգին, եւ խնդրեաց 'ի նոցանէ չվտարել զինքն յաքսոր և չթողուլ